

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Հեղինե Բիշարյանի, Հովհաննես Մարգարյանի և Մհեր Շահգեղյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Չեռնոբիլի ատոմային էլեկտրակայանի և այլ միջուկային աղետներից տուժած քաղաքացիների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-521-13.05.2014-ՍՀ-010/0) վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետությունում հաշվառված՝ ՉԱԷԿ-ի վթարի հետևանքների վերացման աշխատանքների մասնակիցների մեծ մասը համարվում է գինվորական ծառայության պարտականություն կատարելիս՝ հաշմանդամ դարձած անձ, որոնց սոցիալական պաշտպանության հարցերը կարգավորվում են «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով: Այն անձանց սոցիալական խնդիրները, որոնց հաշմանդամությունը

կապված է ՉԱԷԿ-ի վթարի հետևանքների վերացման աշխատանքներին մասնակցելու հետ, կարգավորվում են «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

«Զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածն ամրագրում է, որ զինձառայողներին հավասարեցված անձինք են համարվում վարժական հավաքների կանչված զինապարտները, և նրանց վրա տարածվում են սույն օրենքի 31-րդ, 33-րդ (չորրորդ մաս), 34-րդ (չորրորդ մաս), 35-րդ, 36-րդ (առաջին մաս), 38-րդ, 39-րդ և 40-րդ հոդվածներով նախատեսված դրույթները, մասնավորապես, նրանք օգտվում են անվճար որակյալ բժշկական օգնություն ստանալու, ջրահեռացման, աղբահանության ու ռադիոյի բաժանորդային վարձերը 50 տոկոս զեղչով վճարելու և քաղաքային ուղևորատար տրանսպորտի բոլոր տեսակներով՝ անկախ սեփականության ձևից (բացի տաքսիից), անվճար երթևեկելու իրավունքից:

Միաժամանակ, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 668-Ն որոշման, զինվորական ծառայողական պարտականությունները կատարելիս (այդ թվում՝ պահեստազորի վարժական հավաքների և զորահավաքների ընթացքում ՉԱԷԿ-ի վթարի վերացման աշխատանքներին մասնակցելու հետևանքով) հաշմանդամ դարձած և զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող անձինք ստանում են ամենամսյա դրամական օգնություն (պարգևավճար): Այս կատեգորիային պատկանող անձինք, համաձայն ԱՊՀ երկրների միջև 1993 թվականին կնքված միջպետական համաձայնագրի, օգտվում են նաև ԱՊՀ երկրների տարածքում տարեկան մեկ անգամ արտոնյալ պայմաններով երթևեկելու իրավունքից:

Անկախ հաշմանդամության պատճառից՝ ՉԱԷԿ-ի վթարի հետևանքների վերացման աշխատանքների մասնակից հաշմանդամները, համաձայն «Հայաստանի Հանրապետու-

թյունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, օգտվում են բոլոր տեսակի պրոթեզային իրերի (բացառությամբ թանկարժեք մետաղներից պատրաստվող ատամնապրոթեզների) անվճար պատվիրման, նորոգման և ստացման իրավունքից (հոդված 31): Հաշմանդամություն ունեցող անձինք (1-ին և 2-րդ խմբեր) օգտվում են նաև քաղաքային ուղևորատար էլեկտրատրանսպորտով անվճար երթևեկելու արտոնությունից:

Չեռնոբիլի ԱԷԿ-ի վթարի հետևանքների վերացման աշխատանքների բոլոր մասնակիցները, անկախ զինծառայության կամ հաշմանդամության հանգամանքից, ընդգրկված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշմամբ սահմանված (N 1 հավելվածի 22-րդ կետ) պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցող՝ բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում:

Չեռնոբիլի ԱԷԿ-ի վթարի հետևանքների վերացման աշխատանքների մասնակիցներն ընդգրկված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N 1717-Ն որոշմամբ (N 1 հավելվածի 2-րդ կետի «բ» ենթակետ, որը վերաբերում է 50 տոկոս զեղչով դեղորայքի ձեռքբերմանը) հաստատված արտոնյալ պայմաններով ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական հաստատությունների միջոցով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերի ցանկում:

Ինչ վերաբերում է օրենքի նախագծում առաջարկվող առողջարանային բուժման անվճար ուղեգրերի, ամենամսյա դրամական օգնությունների տրամադրմանը, ապա դրա հնարավորության հարցը կարող է քննարկվել միայն տվյալների առկայության դեպքում:

Միաժամանակ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը նպատակահարմար չի համարում լրացուցիչ արտոնություններ վերապահել ՉԱԷԿ-ի

վթարի և միջուկային այլ աղետների հետևանքների վերացմանը մասնակցած, վթարից զոհված, ճառագայթային հիվանդությունից մահացածների ընտանիքների անդամներին:

Օրենքի նախագծի տեքստի վերաբերյալ հայտնում ենք, որ՝

1. 2-րդ հոդվածի 1-ին մասում «այլ ենթաօրենսդրական ակտերով» բառերն անհրաժեշտ է փոխարինել «այլ իրավական ակտերով» բառերով՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նման ակտերի տեսակ սահմանված չէ.

2. 4-րդ հոդվածի կապակցությամբ հայտնում ենք, որ՝

1) բժշկի ազատ ընտրության սկզբունքի հիման վրա շահառուները բժշկական օգնություն և սպասարկում կարող են ստանալ իրենց ընտրությամբ այն բժշկական կազմակերպություններում, որոնք Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության հետ ունեն պետության կողմից երաշխավորված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու մասին կնքված պայմանագիր.

2) եթե խոսքն անձին հաշմանդամ ճանաչելու, ներառյալ պատճառական կապը որոշելու մասին է, ապա այդ հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 2-ի N 276-Ն որոշմամբ սահմանված կարգով, և ռազմաբժշկական հանձնաժողովին նման լիազորություններ վերապահելը չի բխում «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 2013 թվականի ապրիլի 8-ի N 410-Ն հրամանի դրույթներից.

3) 4-րդ և 5-րդ հոդվածների միջև առկա է որոշակի հակասություն, մասնավորապես, 4-րդ հոդվածում սահմանվում է շահառու խմբի բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը, իսկ 5-րդ հոդվածում՝ միայն ամենամյա բժշկական հետազո-

տություն անցնելու իրավունքը, ինչը ներառված է բժշկական օգնության և սպասարկման իրավունքի մեջ.

4) հողվածում և ամբողջ տեքստում «բժշկական օգնություն» և «բուժօգնություն» բառերը և դրանց համապատասխան հոլովածներն անհրաժեշտ է փոխարինել «բժշկական օգնություն և սպասարկում» բառերով և դրանց համապատասխան հոլովածներով՝ նկատի ունենալով «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի պահանջները: Նույն հոդվածից անհրաժեշտ է հանել «դիսպանսերիզացիա» եզրույթը, քանի որ այն բժշկական օգնության և սպասարկման գործընթացի բաղկացուցիչ է:

3. 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետը տարընթերցման տեղիք է տալիս, մասնավորապես, ներկայացված խմբագրությամբ ստացվում է, որ անվճար դեղ ստանալու իրավունքը տրամադրվում է տարեկան մեկ անգամ, այլ ոչ թե ըստ անհրաժեշտության, միաժամանակ պարզ չէ շահառուի մոտ ճառագայթային հիվանդության բուժման, թե ցանկացած այլ հիվանդության բուժման համար են տրամադրվելու անվճար դեղերը:

Օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետում «դեղորայք» բառն անհրաժեշտ է փոխարինել «դեղ» բառով՝ նկատի ունենալով «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները:

4. 7-րդ հոդվածով նախատեսված օրենքն ուժի մեջ մտնելու ժամկետը վերանայման կարիք ունի:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը նպատակահարմար չի համարում ներկայացված օրենքի նախագծի ընդունումը:

Ներկայացված օրենքի նախագիծը, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն, պետք է ընդունվի պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյանը:

Ներկայացնում ենք օրենքի նախագծի ընդունման դեպքում դրա կատարումն ապահովող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների ցանկը և ժամկետները՝

1. 5-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի կատարումն ապահովելու նպատակով՝

«Չեռնոբիլի ատոմային էլեկտրակայանի և այլ միջուկային աղետներից տուժած քաղաքացիներին առողջարանային անվճար ուղեգրեր տրամադրելու կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում, ժամկետը՝ 2015 թվական.

2. 6-րդ հոդվածի կատարումն ապահովելու նպատակով՝

«Չեռնոբիլի ատոմային էլեկտրակայանի և այլ միջուկային աղետներից տուժած Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին ամենամսյա դրամական օգնություն նշանակելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում, ժամկետը՝ 2015 թվական:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«ԶԵՆՈՒՐԻԼԻ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ ԵՎ ԱՅԼ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ
ՏՈՒԺԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ**

«Զենոնբիլի ատոմային էլեկտրակայանի և այլ միջուկային աղետներից տուժած քաղաքացիների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումը կնպաստի պետական պատվերի շրջանակներում բժշկական օգնության և սպասարկումից օգտվողների թվի ընդլայնմանը և առողջապահության բնագավառի վրա կունենա որոշակի դրական ազդեցություն:

Եզրակացություն

«Զենոնբիլի ատոմային էլեկտրակայանի և այլ միջուկային աղետներից տուժած քաղաքացիների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Զենոնբիլի ատոմային էլեկտրակայանի և այլ միջուկային աղետներից տուժած քաղաքացիների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

- ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**,
- բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից՝ **չեզոք ազդեցություն**:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Զենոնբիլի ատոմային էլեկտրակայանի և այլ միջուկային աղետներից տուժած քաղաքացիների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Զենոնբիլի ատոմային էլեկտրակայանի և այլ միջուկային աղետներից տուժած քաղաքացիների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագիծը վերաբերում է Զենոնբիլի արտակայանի վթարից և միջուկային այլ աղետներից տուժած ՀՀ քաղաքացիների իրավունքների պաշտպանությանը* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն չի նախատեսվում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Չեռնոբիլի ատոմային էլեկտրակայանի և այլ միջուկային աղետներից տուժած քաղաքացիների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Չեռնոբիլի ատոմային էլեկտրակայանի և այլ միջուկային աղետներից տուժած քաղաքացիների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) կարգավորվում են Հայաստանի Հանրապետության՝ Չեռնոբիլի ատոմային էլեկտրակայանի և այլ միջուկային աղետներից տուժած քաղաքացիների իրավունքների ու շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Չեռնոբիլի ատոմային էլեկտրակայանի և այլ միջուկային աղետներից տուժած քաղաքացիների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Չեռնոբիլի ատոմային էլեկտրակայանի և այլ միջուկային աղետներից տուժած քաղաքացիների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենքի) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

**ՀԱՎԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
«Չեռնոբիլի ատոմային էլեկտրակայանի և այլ միջուկային աղետներից տուժած
քաղաքացիների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության
օրենքի նախագծի վերաբերյալ**

«Չեռնոբիլի ատոմային էլեկտրակայանի և այլ միջուկային աղետներից տուժած քաղաքացիների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Չեռնոբիլի ատոմային էլեկտրակայանի և այլ միջուկային աղետներից տուժած
քաղաքացիների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի նախագծի բյուջետային բնագավառում
կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ**

«Չեռնոբիլի ատոմային էլեկտրակայանի և այլ միջուկային աղետներից տուժած քաղաքացիների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ՝ «Փոխհատուցումներ և արտոնություններ ՉԱԷԿ-ի վթարի հետևանքներից տուժած անձանց» գլխում նախատեսված դրույթները (մասնավորապես, նախատեսվում է սահմանել, որ Չեռնոբիլի ատոմային էլեկտրակայանի և այլ միջուկային աղետներից տուժած անձինք իրավունք ունեն՝ ստանալ անվճար ամենամյա բժշկական հետազոտության ծառայություններ՝ համապատասխան մասնագետի ներգրավմամբ, բժշկի կողմից դուրս գրված դեղատոմսով ամեն տարի ստանալ անվճար դեղորայք, ստանալ անվճար ատամնապրոթեզավորման ծառայություններ: Առաջարկվում է նաև սահմանել, որ Չեռնոբիլի ատոմային էլեկտրակայանի և այլ միջուկային աղետների հետևանքների վերացման աշխատանքներին մասնակցած անձինք ստանում են ամենամյա դրամական օգնություն ՀՀ կառավարության սահմանած կարգով և չափով) կբերեն ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ հատկացումների անհրաժեշտության, որի վերաբերյալ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացություն (ծախսերի մասով) հնարավոր է տալ ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից սահմանված կարգով ներկայացված տեղեկանքի և անհրաժեշտ հաշվարկ-հիմնավորումների առկայության պարագայում:

Միաժամանակ նկատի ունենալով, որ նախագծի շրջանակներում ֆիզիկական անձանց տրամադրվող փոխհատուցման և արտոնությունների ոչ բոլոր տեսակներն են «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն եկամտային հարկով հարկման նպատակով համարվում նվազեցվող եկամուտներ՝ գտնում ենք, որ նախագծի ընդունման ազդեցությունը պետական բյուջեի եկամուտների վրա կարող է լինել դրական:

Պ-521-13.05.2014-ԱՀ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**ՉԵՌՆՈՐԲԻԼԻ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ ԵՎ ԱՅԼ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ՏՈՒԺԱԾ
ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

ԳԼՈՒԽ 1

Ընդհանուր դրույթներ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան եւ գործողության ոլորտը

1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիների իրավունքների ու շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները, որոնք տուժել են՝ մասնակցելով Չեռնոբիլի ատոմային էլեկտրակայանի (այսուհետ՝ ՉԱԷԿ) վթարից եւ միջուկային այլ աղետների հետեւանքների վերացման աշխատանքներին:

2. Սույն օրենքով նշված անձանց տրվող արտոնություններն ու փոխհատուցումները տարածվում են սույն օրենքի 3-րդ հոդվածում նշված քաղաքացիների խմբերի վրա:

Հոդված 2. ՉԱԷԿ-ի վթարի եւ այլ միջուկային աղետների հետեւանքներից տուժած քաղաքացիների սոցիալական պաշտպանության վերաբերյալ օրենսդրությունը

1. ՉԱԷԿ-ի վթարից եւ այլ միջուկային աղետներից տուժած քաղաքացիների սոցիալական պաշտպանությունն ապահովվում է սույն օրենքով եւ սույն օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերով:

Հոդված 3. ՉԱԷԿ-ի վթարի եւ միջուկային այլ աղետների հետեւանքներից տուժած քաղաքացիների խմբերը

1. Սույն օրենքի դրույթները տարածվում են չեռնոբիլյան վթարի եւ այլ միջուկային աղետների հետեւանքներից տուժած քաղաքացիների հետեւյալ խմբերի վրա

1) Անձինք, որոնք հիվանդացել են ճառագայթային հիվանդությամբ՝ կապված ՉԱԷԿ-ի վթարի հետեւանքների վերացման աշխատանքներին մասնակցելու հետ, ինչպես նաեւ այն քաղաքացիները, որոնք ճանաչվել են հաշմանդամ եւ հաշմանդամությունը կապվել է անմիջականորեն Չեռնոբիլյան վթարի ազդեցության հետ, այդ թվում՝

2) անձինք (ժամանակավորապես ուղարկված կամ գործուղված), որոնք մասնակցել են Չեռնոբիլի վթարի վերացման աշխատանքներին,

3) զինծառայողներ, ներքին գործերի մարմինների աշխատակիցներ, զինապարտներ, որոնք կանչված են եղել հատուկ հավաքների՝ աշխատելու այդ ժամանակաշրջանում ախտահարված գոտում, Չեռնոբիլի վթարի հետեւանքների վերացման նպատակով

2. Անձինք (ժամանակավորապես ուղարկված կամ գործուղված), որոնք 1986-1987թթ. մասնակցել են ՉԱԷԿ-ի վթարի հետեւանքների վերացման աշխատանքներին ախտահարված գոտում, զինծառայողներ, ներքին գործերի մարմինների աշխատողներ եւ զինապարտներ, որոնք կանչվել են հատուկ հավաքների՝ այդ ժամանակաշրջանում վթարի վերացման աշխատանքներին մասնակցելու համար:

3. Անձինք (ժամանակավորապես ուղարկված կամ գործուղված), որոնք 1988-1989թթ. մասնակցել են Չեռնոբիլի վթարի հետեւանքների վերացման աշխատանքներին ախտահարված գոտում, զինծառայողներ, ներքին գործերի մարմինների աշխատողներ եւ զինապարտներ, որոնք կանչվել են հատուկ հավաքների՝ այդ ժամանակաշրջանում վթարի վերացման աշխատանքներին մասնակցելու համար:

4. Անձինք, /ժամանակավորապես ուղարկված կամ գործուղված/, այդ թվում զինծառայողներ եւ զինապարտներ՝ զորակոչված հատուկ հավաքների, ոստիկանության, պետանվտանգության, անձնակազմերի աշխատակիցներ, որոնք 1957-1958/1959-1961/ թթ. Անմիջապես մասնակցություն են ունեցել 1957թ. «Մայակ» արտադրական միավորման վթարի հետեւանքների վերացման աշխատանքներին:

5. Անձինք, որոնք մասնակցել կամ տուժել են քաղաքացիական եւ ռազմական նշանակության միջուկային այլ օբյեկտների վթարների հետեւանքների վերացման արդյունքում:

Հոդված 4. ՉԱԷԿ-ի վթարի եւ միջուկային այլ աղետների հետեւանքներից տուժած քաղաքացիների բժշկական օգնության եւ ճառագայթային ազդեցությունից պաշտպանվածության իրավունքը

ՉԱԷԿ-ի վթարի եւ միջուկային այլ աղետների հետեւանքներից տուժած քաղաքացիները իրավունք ունեն բժշկական օգնության եւ դիսպանսերիզացիայի առողջապահական կազմակերպություններում ըստ բնակության վայրի: Այդ անձանց մասնագիտացված բուժօգնությունը ապահովում, նրանց հիվանդության եւ հաշմանդամության պատճառական կապը որոշում են ՀՀ պաշտպանության նախարարության կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի եւ ՀՀ առողջապահության նախարարության ճառագայթային բժշկության եւ այրվածքների գիտական կենտրոնի կողմից տրված եզրակացությունների հիման վրա: Եթե ՀՀ առողջապահության նախարարության ճառագայթային բժշկության եւ այրվածքների գիտական կենտրոնը չունի համապատասխան մասնագետներ, ապա հիվանդն ուղղեգրվում է այլ առողջապահական կազմակերպություն:

Գլուխ 2

Փոխհատուցում եւ արտոնություններ ՉԱԷԿ-ի վթարի հետեւանքներից տուժած անձանց

Հոդված 5. Ճառագայթային հիվանդությամբ հիվանդացած եւ հաշմանդամ դարձած անձանց արտոնությունները

1. Սույն օրենքի առաջին գլխի 3-րդ հոդվածում նշված անձինք իրավունք ունեն՝

- 1) Անվճար ամենամյա բժշկական հետազոտման՝ համապատասխան մասնագետների ներգրավմամբ
- 2) Ամեն տարի անվճար դեղորայքի ձեռքբերման (բժշկի դեղատոմսով)
- 3) Անվճար ատամնապրոթեզավորման (բացառությամբ պրոթեզի թանկարժեք մետաղից)
- 4) Անվճար առողջարանային ուղեգրերի ապահովման՝ ՀՀ կառավարության սահմանված կարգով

2. Անձինք, որոնց հիվանդությունները պայմանավորված են նրանց ծնողների ճառագայթված լինելով, երաշխավորվում են սույն օրենքով նախատեսված փոխհատուցումները եւ արտոնությունները:

3. Սույն հոդվածում նշված արտոնությունները վերաբերում են ՉԱԷԿ-ի եւ միջուկային այլ աղետների հետեւանքների վերացմանը մասնակցած, վթարից զոհված եւ ճառագայթային հիվանդությունից մահացածների ընտանիքների անդամներին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 6. ՉԱԷԿ-ի վթարի եւ միջուկային այլ աղետների հետեւանքների վերացման աշխատանքներին մասնակիցների օգնություն ստանալու իրավունքը

ՉԱԷԿ-ի վթարի եւ միջուկային այլ աղետների հետեւանքների վերացման աշխատանքներին մասնակցածները ստանում են ամենամյա դրամական օգնություն՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով եւ չափով:

Հողված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հունվարի 1-ից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Չեռնոբիլի ատոմային էլեկտրակայանի եւ այլ միջուկային աղետներից տուժած քաղաքացիների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտության

Օրենքի նախագծի ընդունումը բխում է ԱՊՀ երկրների շրջանակներում ընդունված «Չեռնոբիլի ԱԷԿ-ի եւ այլ միջուկային աղետների եւ վթարների հետեւանքով ճառագայթահարման ենթարկված քաղաքացիների սոցիալական պաշտպանության մասին» համաձայնագրի դրույթներից, որը Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է դեռեւա 1994 թվականին: 1986 թ. ապրիլի 26-ի Չեռնոբիլի ԱԷԿ-ի վթարը մարդկության խոշորագույն տեխնոգեն աղետներից մեկն էր: Շուրջ 3000 հայրողիներ մեր հանրապետությունից մասնակցեցին այդ աղետի հետեւանքների վերացման աշխատանքներին: Աղետի հետեւանքների վերացման աշխատանքների 3000 մասնակիցներից 400-ը մահացել են, 1600-ից ավելին դառնել են հաշմանդամներ են, որի արդյունքում ճառագայթված ծնողներից ծնվել են տարբեր արատներով բազմաթիվ երեխաներ: Օրենքի նախագծով կարգավորվում է Չեռնոբիլի էլեկտրակայանի վթարի եւ այլ միջուկային աղետների հետեւանքներից տուժած անձանց տրվող արտոնությունների եւ փոխհատուցումների խնդիրը: